

ՎԻՇՏՆ ԱՆԼԵԶՈՒ ՏԻԵԶԵՐՔԻՆ

Չըմբան մեջտեղ. եւ Կիրակի
 Յետ միջօրէ: Դուրսը ձիւն է:
 Տերեւաթափ ծառերը մերկ
 Սառած են արդ ու չեն շնչեր:
 Ոչ մէկ աղմուկ, ոչ իսկ հեռուէն
 Ու կենսաբեր ձայն մը մոլոր:
 Առանձնութեան մեջ արդ լըքեալ
 Թաղերն անգոյն, պաղ, կը նիրհեն:
 Շըրջապատի մանուկներն իսկ
 Կարծես մեռած ու թաղուած են:

Խաղաղութիւնն այս ընդհանուր
 Հիմա կ'իշխէ փողոցներուն,
 Ու կը պարպէ զանոնք կեանքէ.
 Լըռութիւնը կը ծակծըկէ
 Ականջները աղմուկի վարժ
 Խեղճ մարդերուն: Ամայութիւն
 Է ամէն տեղ, ուր կարծես լոկ
 Վիշտն անլեզու տիեզերքին
 Իբրեւ ոգի կը թափառի:

ԱՆԵԼ